



**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՍԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 12 (163) «26» նոյեմբերի 2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼՂՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ	
77	««Կազմակերպություններում էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (համակարգիչների) անվտանգ շահագործման և օգտագործման» N 2.2.4-015-18 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի հուլիսի 29-ի N 150-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 274-Ն հրամանը	3
78	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 176 հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ արդարադատության նախարարի N 107-Ն հրամանը	8
79	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 09-ի N48-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի N 3-Ն հրամանը	9
80	««Փոքր ջերմաջուր» հանքային աղբյուր» բնության հուշարձանի անձնագիրը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 91-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի N 139-Ն հրամանը	10
81	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի Թեմի, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների, հանրապետական գործադիր մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների և հիմնարկի կարգավիճակ ունեցող՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի ենթակայության կազմակեր-	

	<p>պությունների), պետական ոչ առևտրային կազմակերպությունների (բացառությամբ նրանց կողմից ստեղծված կազմակերպությունների՝ անկախ կազմակերպարավական ձևից), Արցախի Հանրապետության դատախազության, Արցախի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, օրենքով ստեղծված պետական մարմինների, Արցախի Հանրապետության դատարանների, Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտի տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի նիշերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության պետի 2013 թվականի մարտի 29-ի N 1-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ ոստիկանության պետի N 3-Ն հրամանը.....</p>	16
ՀԱՏՈՒՎ ԲԱԺԻՆ		
	<p>Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից լիցենզիաներ տրամադրելու մասին որոշումների պատճենները.....</p>	20
	<p>ԱՀ առողջապահության նախարարի կողմից լիցենզաներ տրամադրելու, տրված լիցենզիան վերաձևակերպելու և լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանների պատճենները.....</p>	34
	<p>Արցախի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից հոկտեմբեր ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....</p>	38
	<p>ԱՀ քաղաքաշինության նախարարության կողմից հոկտեմբեր ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....</p>	43

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 13-ին նոյեմբերի 2018 թվականին
Պետական գրանցման համարը 1011871

**Ա Ր Ց Ա Խ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«05» նոյեմբերի 2018թ.

N 274-Ն

ք. Ստեփանակերտ

**«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ՀԱՇՎԻՉ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ (ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ) ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ» N 2.2.4-015-18 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ
ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՑԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 29-Ի
N150-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի
մարտի 16-ի N 90 որոշմամբ հաստատված հավելված 1-ի 9-րդ կետի 20-րդ
ենթակետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրա-
պետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել «Կազմակերպություններում էլեկտրոնային հաշվիչ մեքենա-
ների (համակարգիչների) անվտանգ շահագործման և օգտագործման» N 2.2.4-
015-18 սանիտարական կանոնները և նորմերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առող-
ջապահության նախարարի 2009 թվականի հուլիսի 29-ի «Համակարգիչների և
դրանցից օգտվողների աշխատանքի կազմակերպմանն ու պայմանների ներ-
կայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.III-4.10 սանիտարական կանոնները և
նորմերը հաստատելու մասին» N 150-Ն հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման
օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. ԲԱՂՅԱՆ

ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԵՐ

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ
(ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ) ԱՆՎՏԱՆՔ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
N 2.2.4-015-18**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՈՐՏ

1. Սույն սանիտարական կանոնները և նորմերը (այսուհետ՝ Կանոններ) սահմանում են արտադրական, գրասենյակային, մշակույթի ու սպասարկման ոլորտի կազմակերպություններում, բարձրագույն ուսումնական ու հանրակրթական հաստատություններում և խաղային համալիրներում (ավտոմատներում) (այսուհետ՝ Կազմակերպություններ) էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ շահագործող և օգտագործող աշխատողների և օգտագործողների առողջության պահպանմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ:

2. Սույն Կանոնները տարածվում են էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (այդ թվում՝ անհատական), էլեկտրոնային հաշվիչ մեքենաների հիմքով պատրաստված բոլոր տեսակի արտադրական սարքավորումների, ուսումնական և խաղային համալիրների (ավտոմատների) շահագործման համար նախատեսված սենքերի նախագծման, վերակառուցման, տեղակայման, շահագործման, ինչպես նաև համակարգիչների (անհատական և տեղաշարժվող) հետ աշխատանքի պայմանների կազմակերպման և իրականացման վրա:

3. Սույն Կանոնների կատարման հսկողությունն իրականացվում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության մարմինների կողմից:

**2. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ (ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ)
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ) ՆԵՐԿԱՑԱՑՎՈՂ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

4. Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների շահագործման սենքերն ունենում են բնական և արհեստական լուսավորում՝ համաձայն Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի օգոստոսի 22-ի N 202-Ն հրամանի:

5. Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների շահագործման սենքերում արհեստական լուսավորումն իրականացվում է ընդհանուր հավասարաչափ լուսավորման համակարգով, իսկ արտադրական և գրասենյակային սենքերում՝ առավելապես փաստաթղթերի հետ աշխատանքի դեպքում՝ լուսավորման համակցված համակարգով (ընդհանուր լուսավորմանն ավելացվում է տեղայինը):

6. Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների շահագործման աշխատատեղերում աշխատանքային սեղանի մակերեսի լուսավորվածությունը սահմանվում է՝ 300-500 լյուքս:

7. Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների շահագործման սենքերի լուսային բացվածքները (պատուհանները) սարքավորվում են կարգավորող շերտավարագույրերով, վարագույրով, արտաքին ծածկոցներով և լույսից պաշտպանության այլ միջոցներով:

8. Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների շահագործման սենքերում օդափոխությունն իրականացվում է համաձայն Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի օգոստոսի 22-ի N 202-Ն հրամանի:

9. Արտադրական և գրասենյակային սենքերում, որտեղ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների շահագործմամբ կատարվող աշխատանքները համարվում են հիմնական (դիսպետչերական, օպերատորական, հաշվարկային, դեկավարման խցիկներ և կետեր, հաշվողական տեխնիկայի դահլիճներ և այլն) միկրոկլիմայի չափորոշիչների ցուցանիշները համապատասխանում են սույն Կանոնների աղյուսակ 3-ի պահանջներին:

10. Արտադրական և գրասենյակային սենքերում, որտեղ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների շահագործմամբ կատարվող աշխատանքները համարվում են օժանդակ, միկրոկլիմայի չափորոշիչների ցուցանիշները համապատասխանում են Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի N 237-Ն հրամանի պահանջներին:

11. Բարձրագույն ուսումնական, հանրակրթական հաստատությունների և խաղային համալիրների (ավտոմատների) էլեկտրոնային հաշվիչ մեքենաների շահագործման սենքերում միկրոկլիմայի չափորոշիչների ցուցանիշները համապատասխանում են սույն Կանոնների աղյուսակ 4-ի պահանջներին:

12. Էլեկտրոնային ճառագայթման խողովակով մոնիտորներ ունեցող էլեկտրոնային հաշվիչ մեքենաներն օժանդակ սարքերի՝ պրինտեր, սկաներ և այլնի հետ շահագործելու մեկ աշխատատեղի մակերեսը լինում է ոչ պակաս, քան 6 քառակուսի մետր, իսկ առանց օժանդակ սարքերի շահագործելու դեպքում՝ 4.5 քառակուսի մետր տարածք:

13. Անկախ օժանդակ սարքերի (պրինտեր, սկաներ և այլն) առկայությունից հարթ դիսկրետ (հեղուկ բյուրեղային, պլազմային) էկրանով էլեկտրոնային հաշվիչ մեքենաները շահագործելու մեկ աշխատատեղի մակերեսը լինում է ոչ պակաս, քան 4.5 քառակուսի մետր տարածք:

14. Աշխատատեղերում էլեկտրոնային հաշվիչ մեքենաների մոնիտորների միջև հեռավորությունը լինում է 1.5-ից 2 մետր:

15. Աշխատանքային աթոռը լինում է շարժական՝ բարձրության վրա կարգավորվող: Աթոռի նստարանի և թիկունքի մակերեսները լինում են կիսափափուկ, չսահող և օդի թափանցելիությունն ապահովող ծածկույթից:

16. Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների շահագործման սենքի հատակն ունենում է հակաստատիկ ծածկ: Յուրաքանչյուր օր կատարվում է հատակի խոնավ մաքրում:

17. Կազմակերպությունների աշխատողներն ենթակա են պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N398 որոշմամբ հաստատված կարգի:

18. Հանրակրթական հաստատությունների 10-12-րդ դասարանների սովորողների համար ինֆորմատիկայի պարապմունքները կազմակերպվում են շաբաթը երկու դասից ոչ ավելի, իսկ 1-9-րդ դասարանների սովորողների համար՝ շաբաթական մեկ դաս:

19. Դասերի (պարապմունքների) ժամանակ էլեկտրոնային հաշվիչ մեքենաներով անմիջական աշխատանքի տևողություններն են՝

- 1) 6 տարեկան սովորողների համար՝ 10 րոպե.
- 2) 7-10 տարեկան սովորողների համար՝ 15 րոպե.
- 3) 11-12 տարեկան սովորողների համար՝ 20 րոպե.
- 4) 13-14 տարեկան սովորողների համար՝ 25 րոպե.
- 5) 15-18 տարեկան սովորողների համար՝
ա. առաջին դասաժամի տևողությունը՝ 30 րոպե,
բ. երկրորդ դասաժամի տևողությունը՝ 20 րոպե:

**3. ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ՀԱՇՎԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԿԻ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

20. Աշխատատեղերում էլեկտրոնային հաշվիչ մեքենաների շահագործման ընթացքում՝

1) էլեկտրամագնիսական դաշտի չափորոշիչների մակարդակները համապատասխանում են սույն Կանոնների աղյուսակ 1-ում բերված էլեկտրամագնիսական դաշտի թույլատրելի մակարդակներին:

2) ձայնային ճնշման թույլատրելի մակարդակները և ձայնի համարժեքային մակարդակը համապատասխանում են սույն Կանոնների 2-րդ աղյուսակում բերված թույլատրելի մակարդակներին:

Աղյուսակ 1

ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ՀԱՇՎԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ԷԼԵԿՏՐՈՍՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԹՈՒՑԼԱՏՐԵԼԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Հ/հ	Չափորոշիչներ		Թույլատրելի մակարդակներ
1	2	3	4
1.	Էլեկտրական դաշտի լարվածությունը	հաճախականությունների տիրույթը 5Հց–2000Հց	25 Վ/մ
		հաճախականությունների տիրույթը 2կՀց–400կՀց	2,5 Վ/մ
2.	Մագնիսական հոսքի խտությունը	հաճախականությունների տիրույթը 5Հց–2000Հց	250 նՏլ
		հաճախականությունների տիրույթը 2կՀց–400կՀց	25 նՏլ
3.	Էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը		15 կՎ/մ

Աղյուսակ 2

ՉԱՑՆԱՑԻՆ ՃՆՇՄԱՆ ԹՈՒՑԼԱՏՐԵԼԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ԵՎ ՉԱՑՆԻ ՀԱՄԱՐԺԵՔԱՑԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

N	Աշխատանքային գործունեության տեսակը, աշխատատեղ	Միջին երկրաչափական հաճախականություններով (Հց) օկտավային շերտերում ձայնային ճնշման մակարդակներ (դԲ)									Ձայնի համարժեք մակարդակ (դԲԱ)
		31.5	63	125	250	500	1000	2000	4000	8000	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Ստեղծագործական գիտական գործունեություն, նախագծում, ծրագրավորում, դասավանդում և ուսուցում, բժշկական գործունեություն: Նախագծա-կոնստրուկտորային գրասենյակներում, հաշվիչ մեքենաների ծրագրավորողների, տեսական աշխատանքների և տվյալների վերամշակման լաբորատորիաներում, բուժկետերի հիվանդների ընդունման սենյակներում	86	71	61	54	49	45	42	40	38	50

Աղյուսակ 3

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԳՐԱՄԵՆՑԱԿԱՑԻՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՆՔԵՐՈՒՄ ՄԻԿՐՈՎԼԻՄԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Տարվա եղանակ	Աշխատանքի կարգը	Օդի ջերմաստիճան °C, ոչ ավելի	Օդի հարաբերական խոնավություն, %	Օդի շարժման արագություն, մ/վրկ
1	2	3	4	5
Սառը	թեթև - I ա	22-24	60-40	0.1
	թեթև - I բ	21-23	60-40	0.1

Swap	թեթև - I ա	23-25	60-40	0.1
	թեթև - I բ	22-24	60-40	0.1

Աղյուսակ 4

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ (ԱՎՏՈՄԱՏՆԵՐԻ) ՍԵՆՔԵՐՈՒՄ ՄԻԿՐՈԿԼԻՄԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Օդի ջերմաստիճան, °C	Օդի հարաբերական խոնավություն, %	Օդի շարժման արագություն, մ/վրկ
1	2	3
19	62	< 0,1
20	58	< 0,1
21	55	< 0,1

4. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎԻՉ ՍԵՔԵՆԱՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՍԲ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԻՔԻՇՆԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

21. Էլեկտրոնային հաշվիչ մեքենաների շահագործման հետևանքով առաջացող էլեկտրամագնիսական դաշտի ազդեցությամբ պայմանավորված աշխատատեղերում աշխատանքի պայմանների հիգիենիկ գնահատումը կատարվում է համաձայն Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի օգոստոսի 22-ի N202-Ն հրամանի:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 13-ին նոյեմբերի 2018թ.
Պետական գրանցման համարը 1021872

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» նոյեմբերի 2018թ.

N 107-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 176
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի սեպտեմբերի 16-ի «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ վկայականների կրկնօրինակների և տեղեկանքների տրման կարգը և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյանների ձևերը հաստատելու մասին» թիվ 176 հրամանով հաստատված N1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-ին կետ.

«17.1. ՔԿԱԳ տարածքային մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով վկայականի կրկնօրինակների, ՔԿԱԳ վերաբերյալ տեղեկանքների և քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ պատճենների մասին ստացված հարցումներին պատասխանվում է հարցումը ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում, իսկ կարգի 5.1-5.3-րդ և 15.1-ին կետերով նախատեսված դեպքերում՝ երկու օրվա ընթացքում:

Ամուսնության և ամուսնալուծության ակտային գրանցման առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկանքների մասին քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով ստացված հարցումներին պատասխանվում է հարցումը ստանալուց հետո երեք օրվա ընթացքում»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 26-ին նոյեմբերի 2018թ.
պետական գրանցման համարը 1081875

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» նոյեմբերի 2018թ.

N 3-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 09-Ի
N 48-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 09-ի «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող գիշերօթիկ հաստատություններում խնամվող սովորող երեխաներին անձնական մանր ծախսերի համար նախատեսված գումարի տրամադրման կարգը հաստատելու մասին» N 48-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչել:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

Ս.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 23-ին նոյեմբերի 2018թ.
Պետական գրանցման համարը 1131874

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«9» նոյեմբերի 2018թ.

N 139-Ն

ք.Ստեփանակերտ

**«ՓՈՔՐ ՋԵՐՄԱՋՈՒՐ» ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐ» ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ
ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸԼԹԵՐ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 91-Ն ՀՐԱՄԱՆ
ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ը» կետով և
«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի
73-րդ հոդվածով, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N 1053-Ն որոշմամբ.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ`

1. Հաստատել ««Փոքր ջերմաջուր» հանքային աղբյուր» բնության հուշարձանի անձնագիրը` համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի 2013 թվականի դեկտեմբերի 9-ի ««Փոքր ջերմաջուր» հանքային աղբյուր» բնության հուշարձանի անձնագիրը հաստատելու մասին» N 91-Ն հրամանը:

Ֆ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՆՁՆԱԳԻՐ

«ՓՈՔՐ ՋԵՐՄԱՋՈՒՐ» ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐ» ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ

1. Դասակարգումը՝

Տիպ՝ ջրաերկրաբանական, ենթատիպ՝ ջերմային (թերմալ):

2. Տեղադիրքը և աշխարհագրական կոորդինատները՝

«Փոքր ջերմաջուր» հանքային աղբյուր» բնության հուշարձանը (այսուհետ՝ բնության հուշարձան) գտնվում է Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ջուար համայնքի տարածքում, Ջուար գյուղից 3 կիլոմետր հարավ գտնվող Թարթառ գետի աջակողմյան վտակ Թութխունի միջին հոսանքի ընդարձակ ողողադաշտում, վտակի անմիջապես ձախ ափին: Ձախափնյա ողողադաշտի եզերքով անցնում է գրունտային ճանապարհ, որն Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանը կապում է Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի հետ:

Բնության հուշարձանի բարձրությունը ծովի մակարդակից 1424 մետր:

Բնության հուշարձանի աշխարհագրական կոորդինատները՝ X=605443; Y=4433641:

Սահմանային կետ	Կոորդինատներ	
Ա	X	605348
	Y	4433552
Բ	X	605405
	Y	4433778
Գ	X	605507
	Y	4433733
Դ	X	605496
	Y	4433655
Ե	X	605462
	Y	4433576
Զ	X	605408
	Y	4433514

3. Նկարագրությունը, չափագրությունը և վիճակը՝

1) բնության հուշարձանն իրենից ներկայացնում է ընդերքից դուրս մղվող փողաբերան, որտեղից աղմուկով արտամղվում է տաք հանքային ջուրը: Ջրաերկրաքիմիական տեսանկյունից ջուրն ածխաթթվային է, հիդրոկարբոնատային, կալցիում-նատրիում-մագնեզիումային: Այն ընդգրկվում է Ջերմաջուր-Քարվաճառի ջրաերկրաքիմիական գոտու Թութխունի ջրաերկրաքիմիական ենթագոտում: Ածխաթթուն հանդես է գալիս ինչպես ջրում լուծված, այնպես էլ ազատ վիճակում: Ազատ ածխաթթվի պարունակությունը կազմում է 0,2 գրամ/լիտր: Տաք հանքային ջրի ձևավորումն օրինաչափորեն կապված է տարածքի երկրաբանական զարգացման պատմության և պալեոջրաերկրաբանական պայմանների հետ, իսկ նրա քիմիական կազմի ձևավորման ընթացքում մեծ դեր են խաղացել տարածքի երկրաբանական կառուցվածքում լայն տարածում ունեցող կարբոնատային կազմի ապարները:

Երիտասարդ չորրորդականի հասակի հրաբխային գործունեությունը՝ փոփոխելով տարածքի երկրաջերմային պայմանները, առաջ է բերել կարբոնատային և կարբոնատացված ապարների ջերմամետամորֆացում, որի արդյունքում անջատվել է հսկայական քանակությամբ ածխաթթու գազ և հագեցրել ստորերկրյա ջրերը: Ածխաթթու գազի արմատական շիթերը հարում են խզումային խախտումների գոտիներին, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծել նրանց շրջապտույտի համար: Նման նպաստավոր պայմաններում ստեղծված շրջակա տարածքի մի շարք աղբյուրներից է նաև բնության հուշարձանը:

Արտավիժող ջրի դեբիտը կազմում է 0,3-0,5 լիտր/վայրկյան: Հանքայնացումը տաք ջրում հասնում է 3,2-ից մինչև 6,3 գրամ/լիտր: Գերակշռում են կարբոնատային կազմի միներալները, որոնց նստեցման շնորհիվ փողաբերանի եզերքը շրջանաձև պատված է տրավերտինանման բազմերանգ փուխր ապարներով: Այդ ապարների վրա ստեղծված բնական ակոսներով գլխավոր աղբյուրից ջուրն արտահոսում է տարբեր ուղղություններով: Արտավիժող տաք ջրի ջերմաստիճանը հասնում է 62 աստիճան ցելսիս: Ջուրը համարվում է բուժիչ: Տաք ջրաղբյուրի շուրջը ստեղծված է 2-3 մետր տրամագծով և 1-1,3 մետր խորությամբ բնական ջրավազան:

Բնության հուշարձանն իր դիտարժան, ակնառու և հստակ արտահայտված հատկանիշներով ներկայացնում է եզակի և ինքնատիպ ջրաերկրաբանական հուշարձան,

2) տեսանելի բարձրությունը ողողադաշտի մակերևույթի նկատմամբ կազմում է 1,5-2 մետր,

3) բնականին մոտ վիճակում է, գեղատեսիլ:

4. Սահմանների և պահպանման գոտու նկարագրությունը, մակերեսը, քարտեզ-հատակագիծը

Բնության հուշարձանի պահպանման գոտու Ա հանգուցակետը գտնվում է բնության հուշարձանից հարավ-արևմուտք՝ ձախափնյա ողողադաշտի եզերքով անցնող գրունտային ավտոճանապարհի եզերքում: Ա կետից սահմանագիծը հյուսիս-արևելյան ուղղությամբ (233,08 մետր)՝ ճանապարհի եզերքով միանում է Բ կետին: Այնուհետև սահմանագիծը Բ կետից (111,49 մետր), հարավ-արևելյան ուղղությամբ հատելով գետը, միանում է Գ կետին: Գ կետից տարածվելով հարավային ուղղությամբ՝ սահմանագիծը 78,77 մետրից նույն ողողադաշտի եզերքին հարող երկրորդ հեղեղատի հիմքում միանում է Դ կետին: Դ կետից տարածվելով հարավ-արևմտյան ուղղությամբ, սահմանագիծը 86,01 մետրից ողողադաշտի եզերքին հարող երկրորդ լեռնապարի ստորոտում միանում է Ե կետին: Ե կետից տարածվելով հարավ-արևմտյան ուղղությամբ, սահմանագիծն 82,22 մետրից աջափնյա ողողադաշտի եզերքով միանում է Զ կետին: Այնուհետև Զ կետից սահմանագիծը 71,02 մետր երկարությամբ հատում է Թութխուն գետը և միանում Ա հանգուցակետին:

Բնության հուշարձանի մակերեսը կազմում է 0,1 հեկտար, իսկ պահպանման գոտու ընդհանուր մակերեսը՝ 2,5 հեկտար, սահմանների ընդհանուր երկարությունը՝ 662,6 մետր: Հյուսիսից հարավ ձգվածությունը՝ 262 մետր, իսկ արևմուտքից արևելք ձգվածությունը՝ 120 մետր:

5. Տվյալներ սեփականատիրոջ և հողօգտագործողի մասին

Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Զուար համայնք:

6. Պահպանության և օգտագործման ռեժիմի առանձնահատկությունները

1) «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի համաձայն բնության հուշարձանի և դրա պահպանման գոտու տարածքում արգելվում են՝

ա. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները (այդ թվում՝ հողային ծածկույթի խախտումով).

բ. օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների շահագործումը, հանքակույրեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.

գ. շինարարական, հորատման, պայթեցման աշխատանքները.

դ. լեռնային ապարների նմուշներ վերցնելը.

ե. բնության հուշարձանի արտաքին տեսքը խաթարող ցանկացած գործունեություն.

զ. ավտոմեքենաների մուտքը հուշարձանի տարածք.

է. ցանկացած գործունեություն, որը համաձայնեցված չէ պետական լիազոր մարմնի հետ,

2) թույլատրվում է՝

ա. քաղաքացիների հանգիստը.

բ. ճանաչողական զբոսաշրջության կազմակերպումը.


գ. ուսումնասարտադրական պրակտիկաների կազմակերպումը.


դ. գիտական ուսումնասիրությունները, մոնիթորինգը:

7. Տվյալներ պահպանություն իրականացնող սուբյեկտի մասին

Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Զուար համայնք:







ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԴԱՀՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԱԿԱԶՄԻ ԴԵԿԱԿԱՐ

Է. ՀԱՅՐԱՊԵՏԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 14-ին նոյեմբերի 2018թ.
Պետական գրանցման համարը 2071873

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Հ Ր Ա Մ Ա Ն

«05» նոյեմբերի 2018թ.

N 3-Ն

ք.Ստեփանակերտ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՑԱՒԻ ԹԵՄԻ, ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ), ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՂԾՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՆԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԻՑ), ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ, ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏԻ, ՕՐԵՆՔՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ, ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՆԻՇԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸԹԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 1-Ն ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 2-ի N 817-Ն որոշման 11-րդ հավելվածի 14-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի համաձայն.

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ

1. Սահմանել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի Թեմի, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների, հանրապետական գործադիր մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների և հիմնարկի կարգավիճակ ունեցող՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների), պետական ոչ առևտրային կազմակերպությունների (բացառությամբ նրանց կողմից ստեղծված կազմակերպությունների՝ անկախ կազմակերպարավական ձևից), Արցախի Հանրապետության դատախազության, Արցախի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, օրենքով ստեղծված պետական մարմին-

ների, Արցախի Հանրապետության դատարանների, Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտի տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի նիշերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի հավելվածում ընդգրկված և հրամանի 1-ին կետում չնշված կազմակերպություններին հատկացված համարանիշերն օգտագործվում են մինչև տրանսպորտային միջոցն առաջին անգամ հաշվառումից հանելը:

3. Սույն հրամանի հավելվածում չընդգրկված պետական մարմիններին հատկացվում են հետևյալ համարանիշերը՝

030 LL 90	022 OO 90	010 UU 90	060 SS 90	381CC90 – 400CC90
040 LL 90	044 OO 90	060 UU 90	990 SO 90	
044 LL 90	055 OO 90	070 UU 90		
050 LL 90	100 OO 90	080 UU 90		
200 LL 90		700 UU 90		

4. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության պետի 2013 թվականի մարտի 29-ի «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի Թեմի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների, հանրապետական գործադիր մարմինների ու համայնքների (այդ թվում՝ Ստեփանակերտի ենթակայության կազմակերպությունների և հիմնարկի կարգավիճակ ունեցող՝ Ստեփանակերտի ենթակայության կազմակերպությունների), պետական ոչ առևտրային կազմակերպությունների (բացառությամբ նրանց կողմից ստեղծված կազմակերպությունների՝ անկախ կազմակերպաիրավական ձևից), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերահսկիչ պալատի, օրենքով ստեղծված պետական մարմինների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտի տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի նիշերը սահմանելու մասին» N 1-Ն հրամանը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ

Ի.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐԻ ՆԻՇԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԱՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՊԱՄԱՎՈՐՆԵՐԻ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ), ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՂԾՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՆԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԽՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԻՑ), ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ, ՕՐԵՆՔՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Հ/Հ	Տրանսպորտային միջոցը տնօրինողը	Հասկացվող համարանիշերը
1.	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի Թեմ	005SS90, 005LL90, 008LL90, 341CC90-350CC90, 371CC90-380CC90
2.	Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ	316CC90-325CC90
3.	Արցախի Հանրապետության գերագույն դատարան, Արցախի Հանրապետության դատարաններ, Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ, Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ	002SS90, 001MM90-010MM90
4.	Արցախի Հանրապետության հաշվեքննիչ պալատ	096CC90-100CC90
5.	Արցախի Հանրապետության անվտանգության խորհրդի աշխատակազմ	326CC90-340CC90
6.	Արցախի Հանրապետության առողջապահության նախարարություն	071CC90 - 080CC90
7.	Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն	0500O90, 081CC90-095CC90
8.	Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն	101CC90-110CC90
9.	Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	141CC90-155CC90
10.	Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարություն	0700O90, 201CC90-210CC90
11.	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	100SO90, 111CC90-120CC90
12.	Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	186CC90-200CC90, 211CC90-215CC90, 351CC90-360CC90
13.	Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն	121CC90-130CC90, 216CC90-218CC90
14.	Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարություն	131CC90-140CC90
15.	Արցախի Հանրապետության քաղաքաշինության	070LL90,

	նախարարություն	156CC90–170CC90
16.	Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն	171CC90–185CC90, 002OS90,007OS90, 009OS90,025OS90, 100OS90, 200OS90, 222OS90,600OS90, 800OS90, 900OS90
17.	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական վրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով,	219CC90–220CC90, 301CC90–315CC90
18.	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն	221CC90–230CC90
19.	Ստեփանակերտի քաղաքապետարան (այդ թվում՝ Ստեփանակերտի ենթակայության կազմակերպությունների և հիմնարկի կարգավիճակ ունեցող՝ Ստեփանակերտի ենթակայության կազմակերպությունների)	001LS90, 231CC90–250CC90
20.	Համայնքներ, բացառությամբ Ստեփանակերտի քաղաքային համայնքի	251CC90–300CC90
21.	Արցախի Հանրապետության դատախազություն	003US90,007OO90, 111SO01–126SO01
22.	Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն	001SS22–050SS22, 077SS22, 088SS22, 099SS22, 100SS22, 111SS22, 122SS22, 220SS22–230SS22, 322SS22, 333SS22, 400SS22, 422SS22, 444SS22, 555SS22, 777SS22, 888SS22, 999SS22
23.	Արցախի Հանրապետության ոստիկանություն	001ՈՍ01, 100ՈՍ01, 111ՈՍ01, 001ՈՍ11, 111ՈՍ11, 001ՈՍ50-200ՈՍ50, 202ՈՍ50, 220ՈՍ50, 222ՈՍ50, 300ՈՍ50, 303ՈՍ50, 330ՈՍ50, 333ՈՍ50, 400ՈՍ50, 404ՈՍ50, 440ՈՍ50, 444ՈՍ50, 500ՈՍ50, 505ՈՍ50, 550ՈՍ50, 555ՈՍ50, 600ՈՍ50, 606ՈՍ50,660ՈՍ50, 666ՈՍ50, 700ՈՍ50, 707ՈՍ50, 770ՈՍ50, 777ՈՍ50, 800ՈՍ50, 808ՈՍ50,880ՈՍ50, 888ՈՍ50,900ՈՍ50, 909ՈՍ50,990ՈՍ50, 999ՈՍ50, 555ՈՍ55
24.	Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայություն	033VV01, 901VV01 – 950VV01

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» հոկտեմբերի 2018 թվականի

N 54-Ս

ք. Ստեփանակերտ

**«ԷՆԵՐԳՈ ԳՐՈՒՊ» ՄԱՀՄԱՆԱՓՈՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
«ԿԱՅԾԱՂԲՅՈՒՐ» ՓՈՔՐ ՀԻՂՈՒՄԵԼԵԿՏՐԱԿԱՑԱՆ-1-ՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ
ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետը, 17-19-րդ, 29-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Էներգո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի հոկտեմբերի 3-ի հայտը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. «Էներգո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնքի վարչական տարածքում՝ Հոջանց գետի 2107,0 մետրից 1777,0 մետր գետահատվածքներում (բնական ջրահոսք)՝ «Կայծաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայան-1-ում, Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2035 թվականի հոկտեմբերի 26-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 26-ը:

2. Հաստատել «Էներգո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Կայծաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայան-1-ում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2018 թվականի հոկտեմբերի 26-ի N 54-Ս որոշման

**«Էներգո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
«Կայծաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայան-1-ում էլեկտրական էներգիայի
(հզորության) արտադրության լիցենզիայի**

Պայմանները

**(Լիցենզիա ԼԷ N 0010՝ տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 26-ի N 54-Ս որոշմամբ)**

1. ԼԻՑԵՆԶԻԱՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.

1) **Հանձնաժողով՝** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողով.

2) **Լիցենզավորված անձ՝** «Էներգո Գրուպ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերություն.

3) **Լիցենզիա՝** Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն
փաստաթուղթը, որը հավաստում է փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու և
էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն
իրականացնելու վերջինիս իրավունքն ու պարտականությունը.

4) **Շուկայի կանոններ՝** Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար
փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում
գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները,
համակարգի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն
ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի
ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.

5) **Տորս-մաժոր՝** արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք
ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն
չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր
ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները,
պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ,
պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ,
գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ
հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման
կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու,
թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 26-ից:
3. Լիցենզիան գործում է մինչև 2035 թվականի հոկտեմբերի 26-ը, որից`
 - 1) 2018 թվականի հոկտեմբերի 26-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 26-ը կառուցման ժամանակահատվածն է,
 - 2) մինչև 2035 թվականի հոկտեմբերի 26-ը` էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:
4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնքի վարչական տարածքն է:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՑՅՈՒՆԵՐԸ

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 10,56 մեգավատտ հաշվարկային հզորությամբ «Կայծաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայան-1-ը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

5. ՓՈՔՐ ՀԻՊՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՑՄԱՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՏԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են`
 - 1) ջրառի և ջրահեռացման նիշերն են` 2107,0 մետրից 1777,0 մետր.
 - 2) հաշվարկային ելք` 4,2 խորանարդ մետր վայրկյանում.
 - 3) հաշվարկային ճնշում` 308,5 մետր.
 - 4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն` 10,56 մեգավատտ:
8. Լիցենզիայի գործողության ընթացքում «Կայծաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայան 1-ի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով` ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:
9. «Կայծաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայան-1-ի կառուցման ավարտից հետո էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվելու է հետևյալ սարքավորումներով`
 - 1) զենեքատորներ -2 հատ,
 - 2) հիդրոտուրբիններ -2 հատ:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

12. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

14. Լիցենզավորված անձը լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր դառնալու կամ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ միավորվելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

15. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը նույն կամ մեկ այլ լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս ձեռք բերելու կամ փայմասնակցություն ունենալու, ինչպես նաև 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր վաճառելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

16. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու օրվանից 15 աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձն այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

17. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և գծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

21. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի

հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

27. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

28. Լիցենզավորված անձը պարտավոր է տասն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

29. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի հոկտեմբերի 26-ը, պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «Կայծաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայան 1-ի կառուցման նախագիծը և նախահաշիվը, նախագծի տեխնիկական և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

30. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ՝ համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության և առաքել էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձին:

31. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

32. Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագները սահմանում է Հանձնաժողովը: Սակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողով ներկայացնելու այդ մասով փոքր

հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

34. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված էներգամատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին կամ պարտադիր պայմաններին: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

35. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

36. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգները՝ ըստ Հանձնաժողովի կողմից հաստատված կարգի և նրանց հետ կնքված պայմանագրի դրույթների:

37. Լիցենզավորված անձը պարտավոր է աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող՝ էլեկտրական ցանցի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող, Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև աջակցել իր տնօրինության տակ գտնվող այլ Անձանց սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնման իրականացմանը:

7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ

38. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

39. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

40. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

41. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ներքին կանոնակարգը և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ

42. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախազգուշացում.

2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ.

3) Լիցենզիայի գործողության կասեցում:

4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

43. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

44. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 42-րդ կետի համաձայն, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

45. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

46. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ Լիցենզիայի վերաձևակերպման համար:

Ի վկայություն սույնի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է՝

«Էներգո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.
(ընկերության անվանումը)

ԱՀ. Քաշաթաղի շրջան, գյուղ Դրախտաձոր
(գտնվելու վայրը)

Գործունեության վայրը.

Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնքի վարչական տարածքն է:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՅՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ՍԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» հոկտեմբերի 2018 թվականի

N 55-Ա

ք. Ստեփանակերտ

**«ՌԻՎԵՐ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
«ՌԻՎԵՐ ԷՆԵՐՋԻ» ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐՈՎԱՑՄԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ
(ՀՁՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետը, 17-19-րդ, 29-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ՌԻՎԵՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի հոկտեմբերի 19-ի հայտը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. «ՌԻՎԵՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ծար համայնքի վարչական տարածքում՝ Թարթառ գետի վտակ Կարախան գետի 2090,0 մետրից 1760,0 մետր գետահատվածքներում (բնական ջրահոսք)՝ «Ռիվեր Էներջի» փոքր հիդրոէլեկտրակայանում, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2035 թվականի հոկտեմբերի 26-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 26-ը:

2. Հաստատել «ՌԻՎԵՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ռիվեր Էներջի» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2018 թվականի հոկտեմբերի 26-ի N 55-Ս որոշման

**«ՌԻՎԵՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
«Ռիվեր Էներջի» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության)
արտադրության լիցենզիայի**

Պայմանները

(Լիցենզիա ԼԷ N 0011՝ տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 26-ի N 55-Ս որոշմամբ)

1. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.

1) **Հանձնաժողով՝** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողով.

2) **Լիցենզավորված անձ՝** «ՌԻՎԵՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանա-
տվությամբ ընկերություն.

3) **Լիցենզիա՝** Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն
փաստաթուղթը, որը հավաստում է փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու և
էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն
իրականացնելու վերջինիս իրավունքն ու պարտականությունը.

4) **Շուկայի կանոններ՝** Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար
փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում
գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները,
համակարգի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն
ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի
ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.

5) **Ֆորս-մաժոր՝** արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք
ստեղծվել են Լիցենզավորված անձի կամ քիչ անկախ, ներառյալ (սակայն
չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր
ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները,
պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ,
պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ,
գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ
հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման
կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու,
թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 26-ից:

3. Լիցենզիան գործում է մինչև 2035 թվականի հոկտեմբերի 26-ը, որից՝

1) 2018 թվականի հոկտեմբերի 26-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 26-ը կառուցման ժամանակահատվածն է,

2) մինչև 2035 թվականի հոկտեմբերի 26-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:

4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ծար համայնքի վարչական տարածքն է:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐԸ

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 4,0 մեգավատտ հաշվարկային հզորությամբ «Ռիվեր Էներջի» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

5. ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՑԱՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 2090,0 մետրից 1760,0 մետր.

2) հաշվարկային էլք՝ 1,60 խորանարդ մետր վայրկյանում.

3) հաշվարկային ճնշում՝ 315,0 մետր.

4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 4,0 մեգավատտ:

8. Լիցենզիայի գործողության ընթացքում «Ռիվեր Էներջի» փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

9. «Ռիվեր Էներջի» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտից հետո էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվելու է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատորներ - 2 հատ,

2) հիդրոտուրբիններ - 2 հատ:

6. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

12. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

14. Լիցենզավորված անձը լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր դառնալու կամ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ միավորվելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

15. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը նույն կամ մեկ այլ լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս ձեռք բերելու կամ փայտասնակցություն ունենալու, ինչպես նաև 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր վաճառելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

16. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու օրվանից 15 աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձն այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

17. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և գծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

21. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

27. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

28. Լիցենզավորված անձը պարտավոր է տասն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

29. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի հոկտեմբերի 26-ը, պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «Ռիվեր Էներջի» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը և նախահաշիվը, նախագծի տեխնիկական և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

30. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ՝ համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության և առաքել էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձին:

31. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

32. Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագները սահմանում է Հանձնաժողովը: Սակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողով ներկայացնելու այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

34. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված էներգամատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին կամ պարտադիր պայմաններին: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

35. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

36. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգները՝ ըստ Հանձնաժողովի կողմից հաստատված կարգի և նրանց հետ կնքված պայմանագրի դրույթների:

37. Լիցենզավորված անձը պարտավոր է աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող՝ էլեկտրական ցանցի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող, Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև աջակցել իր տնօրինության տակ գտնվող այլ Անձանց սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնման իրականացմանը:

7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ

38. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

39. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

40. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

41. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ներքին կանոնակարգը և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. ՏՈՒՇԱՆՔՆԵՐԸ

42. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու

վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախագուշացում.

2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ.

3) Լիցենզիայի գործողության կասեցում.

4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

43. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

44. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 42-րդ կետի համաձայն, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

45. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

46. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ Լիցենզիայի վերաձևակերպման համար:

Ի վկայություն սույնի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է՝

«ՌԻՎԵՐ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.
(ընկերության անվանումը)

Ա. Ք. Ստեփանակերտ, Մ. Գոշի 8/5
(գտնվելու վայրը)

Գործունեության վայրը.

Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ծար համայնքի վարչական տարածքն է:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» հոկտեմբերի 2018թ.

N 260-Ա

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆԷ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ
ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 16-ի N 668-Ն որոշման պահանջները

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ`

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության «Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2013 թվականի ապրիլի 12-ին տրված թիվ Կ-XX-000211 լիցենզիան վերաձևակերպել «Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության անվանմամբ:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ. Հովհաննիսյանին`

1) ապահովել լիցենզիայում կատարված փոփոխության մասին տեղեկությունների գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը դիմումատուին և գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին:

Ա. ԲԱՂՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«25» հոկտեմբերի 2018թ.

N 265-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՐԱՅՐ ԼԱԼԱՑԱՆԻՆ ՏՐՎԱԾ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին
մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Նորայր Լալայանի դիմումը

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2013 թվականի հոկտեմբերի 30-ին ընտանեկան
ստոմատոլոգիական գործունեության համար անհատ ձեռնարկատեր Նորայր
Լալայանին տրված թիվ Ա-XX-000240 լիցենզիան:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության
աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ
Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը
համապատասխան գրանցամատյանում.

2) անհատ ձեռնարկատեր Նորայր Լալայանի լիցենզիայի բնօրինակը կցել
նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը
գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա.ԲԱՂՅԱՆ

**ԱՐՑԱԽԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«22» նոյեմբերի 2018թ.

N 283-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՍՏՈՄԱՏՈՒՈՒԳԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջներով.

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Մարիա Հովհաննիսյանի (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Մարտակերտ, Ազատամարտիկների 69) հայտը բավարարել և տրամադրել «Ընտանեկան ստոմատոլոգիական» գործունեություն իրականացնելու համար լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

ԱՐԱՅԻԿ ԲԱՂՅԱՆ

**ԱՐՑԱԽԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«22» նոյեմբերի 2018թ.

N 284-Ա

ք.Ստեփանակերտ

**«ԱԼԵՔՍ ՍՏՈՄ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՍՏՈՄՍՏՈՂՈԳԻԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի
աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱԼԵՔՍ ՍՏՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ,
Հեքիմյան 12/54) հայտը բավարարել և տալ «Ընտանեկան
ստոմատոլոգիական» գործունեություն իրականացնելու համար լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության
աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ
Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը
համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը
գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա.ԲԱՂՐՅԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԿԱՍ ԿԱՍԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

06.11.2018թ.

h/h	Լիցենզավորված անձի անվանումը կամ անունը, ազգանունը	Լիցենզիայի		Գործունեության		Լիցենզիայի գործողության ժամկետը	Ծանոթություն
		համարը	տրման ամսաթիվը	տեսակը	իրականացման վայրը		
ՏՐԱՄԱԴՐՈՒՄ							
1	Մարատ Վլադիմիրի Մարգարյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00677	01.10.2018թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	
2	Արսեն Արմենի Մինասյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00678	01.10.2018թ.		ԱՀ	անժամկետ	
3	ԱԶ Էրիկ Աբրահամի Պողոսյան	ՏՕՆ00679	01.10.2018թ.		ԱՀ	անժամկետ	
4	ԱԶ Արթուր Ալեքսանդրի Զամալյան	ՏՕՆ00680	01.10.2018թ.		ԱՀ	անժամկետ	
5	Եսավ Արծվիկի Հայրապետյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00681	01.10.2018թ.		ԱՀ	անժամկետ	
6	Արմեն Սամվելի Բարսեղյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00682	17.10.2018թ.		ԱՀ	անժամկետ	
7	ԱԶ Վահրամ Արեգի Աբրահամյան	ՏՕՆ00683	17.10.2018թ.		ԱՀ	անժամկետ	
8	ԱԶ Աբրահամ Գրիգորի Պողոսյան	ՏՕՆ00684	17.10.2018թ.		ԱՀ	անժամկետ	

9	ԱԶ Գևորգ Շիրաստանի Հայրապետյան	SON00685	17.10.2018թ.		ԱՀ	անժամկետ	
10	ԱԶ Սլավիկ Միշայի Գրիգորյան	SON00686	25.10.2018թ.		ԱՀ	անժամկետ	
11	Նորայր Յուրիի Ավետիսյան (ֆիզիկական անձ)	SON00687	25.10.2018թ.		ԱՀ	անժամկետ	
12	Արտաշես Արամայիսի Աթայան (ֆիզիկական անձ)	SON00688	25.10.2018թ.		ԱՀ	անժամկետ	
13	Սամվել Արտաշի Իսրայելյան (ֆիզիկական անձ)	SON00689	25.10.2018թ.		ԱՀ	անժամկետ	
ՂԱՂԱՐԵՑՈՒՄ							
14	ԱԶ Կառլեն Ազիզյանյան	SON00042	13.10.2009թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 01.10.2018թ.
15	ԱԶ Վլադիմիր Ավետիսյան	SON00352	28.02.2014թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 17.10.2018թ.
16	ԱԶ Վալերի Համբարձումյան	SON00402	30.09.2014թ.		ԱՀ	անժամկետ	
17	Վիտալի Ալբերտի Բեկլարյան (ֆիզիկական անձ)	SON00570	26.07.2017թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 25.10.2018թ.
18	ԱԶ Արթուր Յաշայի Աղավելյան	SON00578	13.10.2017թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 17.10.2018թ.
19	ԱԶ Սուրեն Արտյուշի Ավետիսյան	SON00579	13.10.2017թ.		ԱՀ	անժամկետ	
20	ԱԶ Կարեն Լեոնի Բաբայանին	SON00600	02.03.2018թ.		ԱՀ	անժամկետ	

ԳԱՍԵՑՈՒՄ							
21	ԱԶ Դավիթ Խաչատրյան	SON00054	20.01.2010թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
22	ԱԶ Մեյրան Բալայան	SON00263	24.01.2013թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
23	ԱԶ Ղարիբ Գրիգորյան	SON00266	07.02.2013թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
24	ԱԶ Կարեն Պետրոսյան	SON00281	28.03.2013թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
25	ԱԶ Սամվել Բաղդասարյան	SON00297	07.06.2013թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
26	ԱԶ Նվեր Ստեփանյան	SON00334	29.10.2013թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 29.10.2018թ.
27	ԱԶ Ռուդիկ Սարգսյան	SON00349	11.02.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
28	ԱԶ Գարիկ Պետրոսյան	SON00372	28.04.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
29	ԱԶ Անդրանիկ Հովհաննիսյան	SON00405	29.10.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 29.10.2018թ.
30	ԱԶ Վազիֆ Մարգարյան	SON00410	10.11.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.

31	ԱԶ Մեյրան Աղաջանյան	SON00434	09.03.2015թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
32	Սամսոն Սիմոնյան (Ֆիզիկական անձ)	SON00450	21.10.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 21.10.2018թ.
33	Սերյոժա Արամի Սարգսյան (Ֆիզիկական անձ)	SON00484	15.03.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 20.10.2018թ.
34	Էրիկ Զարմիկի Պողոսյան (Ֆիզիկական անձ)	SON00486	31.03.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
35	ԱԶ Էդուարդ Վլադիմիրի Հովսեփյան	SON00532	31.01.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
36	Գառնիկ Կամոյի Շահրամանյան (Ֆիզիկական անձ)	SON00539	17.03.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
37	ԱԶ Նորայր Վլադիմիրի Միքայելյան	SON00540	17.03.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
38	Գառնիկ Էդուարդի Բաղյան (Ֆիզիկական անձ)	SON00545	25.04.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 19.10.2018թ.
39	Խաչատուր Ապետնակի Պետրոսյան (Ֆիզիկական անձ)	SON00553	15.05.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 20.10.2018թ.
40	Աղամյան Գարի Վալերիի (Ֆիզիկական անձ)	SON00568	14.07.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 20.10.2018թ.
41	ԱԶ Մխիթար Զաքարյան	SON00580	13.10.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 13.10.2018թ.

42	ԱԶ Ռուդիկ Գեորգիի Օհանյան	ՏՄՈ00581	13.10.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 13.10.2018թ.
----	---------------------------	----------	--------------	--	----	----------	----------------------------

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2018 թվականի հոկտեմբեր ամսվա համար

ԱՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Ֆիզիկական.անձանց /անուն, ազգանուն/, բնակության վայրը իրավաբանական անձանց /անվանումը/, գտնվելու վայրը	ՀՎՀՀ	Լիցենզ. համար	Լիցենզ. տալու ամսաթ.	Գործողության տեսակը	Գործուն. իրական. վայրը	Գործող. ժամկետը	Պետական տուրքի առաջին վճարման ամսաթիվը	Ծա- նոթ.
1	«ԱՂԱՋԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ՍՊԸ ք. Շուշի, Պողոսյան փող. շենք 5/31	90343197	ՇԻ-1053	05.10.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	02.10.2018	
2	«ԱՍՏՂ ՇԻՆ» ՍՊԸ ք. Ստեփ, Վ. Սարոյան 10/64	90041706	ՇԻ-1054	26.10.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	24.10.2018	

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2018 թվականի հոկտեմբեր ամսվա համար

ԱՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձևակերպում		Լիցենզիայի գործողության ժամկետի երկարացում (եշել երկարացված ժամանակահատվածի ավարտման ամսաթիվը)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի գործողության կասեցում		Լիցենզիայի գործունեության թույլտվության արտոնագիրը մինչև համարվելու ամսաթիվը
	Անվանումը	ՀՎՀՀ			Որոշման ամսաթիվը	Նոր անվանումը		կասեցման մասին որոշման կամ դեպի ամսաթիվը	կասեցումը հանելու մասին որոշման ամսաթիվը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
1	Մարտակերտի «Կոմունալ բնակարանային» ՓԲԸ ք.Մարտակերտ, Ազատամարտիկ. 117	901410122	ՇԻ-257	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				08.10.2018		
2	«ԿԱՊԱՎՈՐ» ՍՊԸ ք. Ստեփ. Աջափնյա 2	90003442	ՇԻ-260	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>տրանսպորտային</i>				29.10.2018		
3	«ՊՈՐՏԱԼ» ՍՊԸ ք. Ստեփ. Կնունյանցների 28/34	90021959	ՔՓՍ-335	Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				24.10.2018		
4	«ՆԱՐԵԿ» ՍՊԸ ք. Ստեփ. Բաղրամյան 3/31	90012623	ՇԻ-487	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				09.10.2018		
5	«ԽԵՆԻ-ՈՒ» ՍՊԸ ք. Ստեփ. Վ. Մամիկոնյան	90024861	ՔՓՍ-490	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝				19.10.2018		

	13 ^ա /16			<i>բնակելի, հասարակական և արտադրական</i>						
6	«ԷԼՆԱՐՏԻ» ՍՊԸ ք. Ստեփ. Սասունցի Դավիթ փող.շ. 56/39	90033853	ՇԻ- 835	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				11.10.2018		
7	«ԼԱՌՄՍ» ՍՊԸ ք. Ստեփ, Բեկզառյանի 39	90036955	ՇԻ- 910	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				15.10.2018		
8	«ԿՈՆՏՈՒՐ» ՍՊԸ ք. Ստեփ, Սասունցի Դավիթ փ. շ 56/29	90037681	ՔՓՄ- 913	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				15.10.2018		
9	«Մ Ե Չ Տ Ա» ԱԿ ք. Ստեփ., փող.Կամոյի 2	90003056	ՇԻ- 801	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					27.09.2018	
10	«ԱԶԻՄՈՒՏ» ՍՊԸ ք.Ստեփ. Դուրիանի փող. 3-րդ փկղ. տուն 4	90016134	ԻՀ- 246	<i>Բնժեներական հետազննում</i>					28.08.2018	
11	«ՍՏԱԿ» ՓԲԸ ԼՂՀ Ասկերանի շրջան, գյուղ Այգեստան	90073673	ՇԻ- 684	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>						22.10.2018 (դիմում ստ 17.10.2018)
12	«ԿԱՊԻՏԱԼ ՍՏՐՈՅ» ՍՊԸ ք. Ստեփ. Վ. Սարոյան 43/1	90038753	ՇԻ- 942	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>						22.10.2018 (դիմում ստ 10.10.2018)